ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (-374 11) 514 004, էլ. փոստ՝ mayor@yerevan.am

№ 5265-Ա «24» դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 1959-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի մայիսի 19-ի «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին» N 1959-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝ «Երևանի Աջափնյակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց», «Աջափնյակի շախմատի դպրոց», «Երևանի Ավանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց», «Երևանի Ավանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Դավթաշենի շախմատի դպրոց», «Երևանի Էրեբունու շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց», «Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Վահան Ջատիկյանի անվան մարզակումբ», «Երևանի Մալաթիա-Սեբաստիայի մանկապատանեկան համալիր մարզադպրոց», «Երևանի Մալաթիա-Սեբաստիայի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց», «Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն», «Երևանի Աշոտ Ղուլյանի (Բեկորի) անվան ավիամոդելավորման դպրոց», «Երևանի Նոր Նորքի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց», «Երևանի Նորք-Մարաշի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Նուբարաշեն մարզամշակութային կենտրոն», «Երևանի Նուբարաշենի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի

Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Քանաքեռ-Զեյթունի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» և «Երևանի Քանաքեռ-Զեյթունի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվների հ.հ.1-52 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հ.հ.1-52 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ